

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲԲԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Արա Նոանյանի և Արմեն Ռուստամյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած՝ Հակամենաշնորհային կարգավորման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Օրենքի նախագծի համաձայն նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել՝ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին՝ և՛ Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքները: Այդ կապակցությամբ գտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագծի ընդունումը լուրջ հիմնավորման կարիք ունի: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն արդեն իսկ իրականացնում են նշված օրենքներով նախատեսված լիազորությունները: Նշված օրենքներով հստակ ամրագրված են համապատասխան ընթացակարգեր, պատասխանատվությանը վերաբերող դրույթներ և այլն: Այդ առումով պարզ չէ, թե գործող օրենքներով ինչպիսի չկարգավորված հարաբերություններ կամ հանձնաժողովների լիազորություններում ինչպիսի չկարգավորված դրույթներ կան, որոնք փորձ է արվում իրականացնել ներկայացված նախագծով:

Նախագիծը չի լուծում ներկայացված հիմնավորման մեջ նշված խնդիրները, այլ, ի տարբերություն գործող օրենսդրության, նախատեսում է երկու հանձնաժողովի միավորումը մեկ կառույցի մեջ: Մինչդեռ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին՝ և՛ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կարգավորման առարկաները բացարձակապես տարբեր են և չեն կրկնում միմյանց: Դրանով

պայմանավորված՝ տարբեր են և չեն կրկնվում նաև երկու հանձնաժողովի գործառույթները, խնդիրները, լիազորությունները: Հանձնաժողովներն առաջնորդվում են տարբեր ընթացակարգերով:

Այսպես, եթե Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կարգավորում է այն ոլորտները, որտեղ գրեթե հնարավոր չէ ձևավորել մրցակցային դաշտ, և կարգավորման նպատակն է մենաշնորհային պայմաններում հավասարակշռել սպառողների ու կարգավորվող անձանց շահերը, ապա Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նպատակը և խնդիրներն ուղղված են մրցակցային միջավայրում բարեխիղճ մրցակցության ապահովմանը, սպառողների շահերի պաշտպանությանը, ազատ տնտեսական մրցակցության խրախուսմանը և այլն:

Տնտեսական մրցակցության պաշտպանության և մենաշնորհային ոլորտների կարգավորման գործառույթներն առանձին մարմինների կողմից իրականացվելու սկզբունքը կիրառվում է նաև ԱՄՆ-ում և Եվրամիության երկրներում:

Ներկայացված օրենքի նախագիծը խեղաթյուրում է կարգավորման գաղափարախոսությունը: Կարգավորման գաղափարախոսությունը թելադրում է, որ հանրային ծառայությունների և հակամենաշնորհային կարգավորման ոլորտները կարգավորող մարմինները լինեն ինքնուրույն, ինչը թույլ կտա այդ մարմիններին, բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքների սահմաններում, առավելագույնս հավասարակշռել սպառողների և կարգավորվող անձանց շահերը, կարգավորման գործառույթներն իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, զերծ մնալ քաղաքական կամ այլ ուժերի հնարավոր ճնշումներից: Մինչդեռ, օրենքի նախագծով ստեղծվող կառույցն ուղղակիորեն կախման մեջ է հայտնվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից և պարունակում է քաղաքականացված մարմնի վերածվելու վտանգ: Նշվածը հավաստվում է նախագծի մի շարք հոդվածներով (7-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր, 8-րդ հոդվածի 4-րդ մաս, 14-րդ հոդվածի 2-րդ մաս), որոնց համաձայն հակամենաշնորհային քաղաքականությունը, տարեկան աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև գործունեության արդյունքների հաշվետվությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հակամենաշնորհային մարմնի տարեկան աշխատանքային ծրագրի կամ տարեկան հաշվետվության երկրորդ անգամ անընդմեջ չհաստատումը նշանակում է անվստահություն այդ մարմնի ղեկավարի նկատմամբ: Բացի դրանից, հակամենաշնորհային խորհրդի նախագահի թեկնածուների առաջադրման առաջնահերթության իրավունքը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը (խմբակցություններին), ինչպես նաև տարեկան գործու-
AJV-25-13 2010-07-01

նետության արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ հաստատման: Նշված դրույթները ոչ միայն ամբողջովին ձևական են դարձնում ստեղծվող կառույցի՝ այլ պետական մարմիններից անկախության սկզբունքը, այլև բարձրացնում են հանրային ծառայությունների ոլորտում ներդրումային դաշտի ռիսկայնությունը:

Ինչ վերաբերում է ստեղծվող կառույցի կազմի նշանակմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կարգավորող մարմնի անդամ ընտրելն ուղղակիորեն հակասում է կարգավորման սկզբունքներին և նպաստակին: Այս դեպքում այդ անդամները որոշակի պարտավորություններով կաշկանդված կլինեն իրենց ընտրողների (ենթադրաբար՝ սպառողների, սպառողների որոշակի խմբերի, հասարակական կազմակերպությունների) առջև: Արդյունքում կվտանգվեն նշված անդամների՝ որոշումների կայացման, հարցերի քննարկման գործընթացներին օբյեկտիվ, բազմակողմանի, անաչառ և անկողմնակալ մոտեցում ցուցաբերելու, միայն օրենքով ղեկավարվելու, որոշումների ընդունման ժամանակ իրենց ներքին համոզմունքով քվեարկելու սկզբունքները:

Նախագծում բացակայում են կարգավորմանը բնորոշ գործառույթները: Կարգավորումը միայն սակագների սահմանում չէ, այլ՝ կարգավորման համար անհրաժեշտ հիմնական միջոցների ամբողջական համախումբ՝ լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և վերահսկում, պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, հաշիվների և եթափաշիվների ներդնում, զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրում և այլն: Բացի դրանից, նախագծում ընդհանրապես հաշվի չի առնված կապը հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող ճյուղային օրենքների (էներգետիկայի մասին՝ էլեկտրոնային հաղորդակցության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներ, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք և այլն), ինչպես նաև՝ Լիցենզավորման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի հետ:

Հարկ է նշել, որ տնտեսական մրցակցության պաշտպանության և հանրային ծառայությունների ոլորտներում պետական կարգավորման գործառույթների միավորումը լուրջ խնդիրներ կառաջացնի նաև այդ ոլորտների կանոնակարգման համար նախատեսված դրույթների միասնական կիրառման տեսանկյունից:

Նույն խնդիրը վերաբերում է նաև՝ սպառող՝ հասկացության սահմանմանը, քանի որ, ի տարբերություն տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի, որտեղ՝ սպառող՝ կարող է լինել նաև այն անձը, որը ցանկանում է պատվիրել կամ ձեռք բերել ապրանք, հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում՝ սպառող՝ է համարվում այն անձը, որը մատակարարի հետ կնքել է համապատասխան ծառայությունների մատուցման մասին

պայմանագիր (էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում նաև այն անձը, որը դիմել է նշված ծառայություններից օգտվելու համար):

Համաձայն կից հիմնավորման մինչև օրս չկա հաստատված տնտեսական մրցակցության պաշտպանության ռազմավարություն կամ ծրագիր: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ 'Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հրապարակում է հաջորդ տարվա իր գործունեության տարեկան ծրագիրը, որն ամփոփ տեղեկություններ է պարունակում`

1) տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,

2) տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի,

3) տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմների,

4) օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար հանձնաժողովի կողմից սահմանված այլ անհրաժեշտ դրույթների մասին:

Ներկայումս մշակման փուլում է գտնվում և ընթացիկ տարում հաստատվելու է Հայաստանում տնտեսական մրցակցության պաշտպանության եռամյա ռազմավարությունը, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի 78.2-րդ կետով:

Համաձայն 'Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը յուրաքանչյուր տարի մամուլում հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը, իսկ նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը՝ զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և այլ ժամանակակից միջոցներով: Հանձնաժողովի նիստերը դոնբաց են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ ներքին կանոնակարգային հարցեր: Հանձնաժողովն իր սահմանած կարգի համաձայն հայտարարում է նիստերի անցկացման տեղը և ժամանակը:

Նախագծի դրույթները հակասում են 'Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին' Հայաստանի Հանրապետության օրենքին:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Հակամենաշնորհային կարգավորման մասին

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Սույն օրենքը սահմանում է մենաշնորհային գործունեության եւ ոչ բարեխիղճ մրցակցության կանխարգելման, նախազգուշացման ու սահմանափակման, ինչպես նաեւ բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների քննարկման, հաստատման եւ այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունների ֆինանսական վերահսկողության իրականացման իրավական եւ կազմակերպչական հիմքերը՝ նպատակ ունենալով ապահովել ապրանքային շուկաների արդյունավետ գործունակության, բարեխիղճ մրցակցության աջակցության ու զարգացման, ինչպես նաեւ սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջավայր ու պայմաններ:

2. Սույն օրենքի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանել ապրանքների ազատ տեղաշարժի, մրցակցության պաշտպանության, ազատ տնտեսական գործունեության, ինչպես նաեւ ապրանքային շուկաների արդյունավետ գործունակության համար անհրաժեշտ պայմանների ապահովումն, ինչպես նաեւ ապահովել սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջավայր ու պայմաններ:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- 1) *Ապրանք*՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտների բոլոր տեսակները, որոնք կարող են դառնալ առք ու վաճառքի, փոխանակման առարկաներ, ինչպես նաեւ օրենսդրորեն չարգելված աշխատանքներ ու ծառայություններ, որոնք իրականացվում, մատուցվում կամ կարող են իրականացվել եւ մատուցվել կամ սովորաբար իրականացվում, մատուցվում են փոխհատուցման հիմքի վրա:
- 2) *Փոխադարձ փոխարինելի ապրանքներ*՝ ապրանքներ, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց նպատակային /ֆունկցիոնալ/ նշանակության, կիրառման, որակական, բաղադրական ու տեխնիկական բնութագրերով եւ այլ հատկանիշներով այնպես, որ գնորդի համար մեկը մյուսով փոխարինելն էական նշանակություն չունենա:
- 3) *Ապրանքային շուկա*՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ նրա առաձին մասերում /հատվածներում/ որոշակի ապրանքի եւ դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդների կողմից ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով ու նպատակահարմարությամբ՝ համապատասխան տարածքում եւ այդ հնարավորության բացակայությունն այդ տարածքից դուրս:

4) *Տնտեսվարող սուբյեկտ*՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, առևտրային կազմակերպություն, ինչպես նաև անձանց խումբ:

5) *Սպառող*՝ քաղաքացիական իրավահարաբերությունների ցանկացած սուբյեկտ, որը ցանկանում է պատվիրել կամ ձեռք բերել ապրանք կամ ապրանքի պատվիրատու, ձեռքբերող կամ օգտագործող (եթե վերջինի դեպքում ապրանքը, այդ թվում այլ ապրանքի բաղկացուցիչ մասը հանդիսանում է իրականացված կամ իրականացվող քաղաքացիաիրավական գործարքների առարկա):

6) *Մենաշնորհային գործունեություն*՝ տնտեսվարող սուբյեկտների եւ համապատասխան իրավասու մարմնի սույն օրենքին հակասող գործողություններ (անգործություն), որոնք ուղղված են մրցակցության չթույլատրելուն, սահմանափակման կամ մեկուսացմանն, ինչպես նաև սպառողների իրավունքների, ազատությանն ու օրինական իրավունքներին վնաս հասցնելը:

7) *Օրինական մենաշնորհ*՝ պետական, բնական եւ արտակարգ մենաշնորհներ

ա. *Պետական մենաշնորհ*՝ հասարակական հարաբերությունների համակարգ, որի դեպքում առանձին տեսակի գործունեության իրականացման բացառիկ իրավունքը (այդ թվում՝ ձեռնարկատիրական) ունի միայն պետությունը՝ ի դեմս պետական մարմինների կամ այլ հատուկ իրավասու սուբյեկտը:

բ. *Բնական մենաշնորհ*՝ պետության կողմից թույլատրված հասարակական իրավահարաբերություններ, որոնց դեպքում ապրանքային շուկայում պահանջարկի բավարարումն առավել արդյունավետ է մրցակցության բացակայությամբ՝ պայմանավորված արտադրության տեխնոլոգիական առանձնահատկություններով, համապատասխան ապրանքները սպառման ժամանակ չեն կարող փոխարինվել այլ ապրանքներով, որի հետ կապված տվյալ ապրանքային շուկայում պահանջարկն ավելի քիչ է պայմանավորված գնով, քան այլ ապրանքներինը:

գ. *Արտակարգ մենաշնորհ*՝ ապրանքային շուկայում հասարակական հարաբերությունների համակարգ, որը թույլատրված է պետության կողմից՝ որոշակի ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մրցակցությունը բացակայում կամ սահմանափակ է:

8) *Մրցակցություն*՝ տնտեսվարող սուբյեկտների մրցություն, որի արդյունքում արդյունավետորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

9) *Անբարեխիղճ մրցակցություն*՝ տնտեսվարող սուբյեկտների ցանկացած գործողություններ՝ ուղղված արտոնությունների ձեռքբերմանը, որոնք հակասում են հակամենաշնորհային օրենսդրության պահանջներին, գործարար շրջանառության սովորություններին, պարկեշտության, խելամտության ու արդարացիության պահանջներին, որոնք կարող են վնաս հասցնել կամ արդեն իսկ վնաս են հասցրել այլ տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակիցներին, կամ վնասել վերջիններիս գործարար համբավին:

10) *Գերիշխող դիրք*՝ տնտեսվարող սուբյեկտի դիրքն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող, եթե նա որպես մատակարար կամ սպառող չունի մրցակից կամ չի հանդիպում որևէ էական մրցակցության, կամ իր իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը:

11) *Մենաշնորհային բարձր գին`* տվյալ ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավորող սուբյեկտի կողմից հաստատվող գին, որի դեպքում տվյալ տնտեսավորող սուբյեկտը փոխհատուցում է կամ կարող է փոխհատուցել չհիմնավորված ծախսերը եւ /կամ ունեցել կամ կարող է ունենալ էականորեն ավելի շատ շահույթ քան կարող էր ունենալ համադրելի կամ մրցակցության պայմաններում:

12) *Մենաշնորհային ցածր գին`* ձեռքբերվող ապրանքների գին, որը հաստատվում է ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավորող սուբյեկտի, որպես գնորդի կողմից` նպատակ ունենալով ստանալ լրացուցիչ շահույթ եւ/կամ ապրանքների վաճառողների հաշվին փոխհատուցելու իր չհիմնավորված ծախսերը, կամ այն ապրանքների գինն է, որը հաստատվում է ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավորող սուբյեկտի որպես վաճառողի կողմից` այնպիսի մակարդակի վրա, որը տվյալ ապրանքի իրացումից ծախսածածկող չէ, վնասներ է հասցնում ապրանքների իրացնողներին, ինչի արդյունք է կամ կարող է արդյունք դառնալ մրցակցության սահմանափակումը` մրցակիցներին շուկայից դուրս մղելու ճանապարհով:

ՀՈՂՎԱԾ 3. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

1. Սույն օրենքը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում եւ այն տարածվում է Հայաստանի Հանրապետությունում ապրանքային շուկաներում մրցակցության վրա ազդող իրավահարաբերությունների վրա, որոնց մասնակից կարող են լինել տեղական եւ օտարերկրյա իրավաբանական անձինք եւ նրանց ներկայացուցիչները, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու վերջինների իրավասությունը ձեռքբերած մարմիններն ու կազմակերպությունները եւ ֆիզիկական անձինք, այդ թվում` անհատ ձեռներեցները:

2. Սույն օրենքը չի տարածվում մտավոր սեփականության իրավունքներին առնչվող հարաբերությունների վրա, որոնք բխում են գյուտերի, արդյունաբերական օրինակների, ապրանքային նշանների, հեղինակային եւ այլ մտավոր իրավունքների, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքներն օգտագործվում են մրցակցության սահմանափակման նպատակով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական շրջանառությունից հանված ապրանքներին առնչվող իրավահարաբերությունների վրա:

3. Սույն օրենքով կանոնակարգվում է բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպությունների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների սակագների սահմանումը եւ այդ կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը: Մասնավորապես, այդ ոլորտներին են դասվում.

1) էներգետիկական համակարգը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,

2) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը եւ կեղտաջրերի մաքրումը,

3) հեռահաղորդակցության/էլեկտրոնային հաղորդակցության/բնագավառը,

4) փոստային կապի բնագավառը,

5) երկաթուղային տրասնպորտի բնագավառը` ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման եւ օգտագործման վճարի հաստատման մասով,

6) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ,

7) հանրային տրանսպորտ /այդ թվում՝ ստորգետնյա էլեկտրատրանսպորտ՝ մետրո/:

4. Արժեթղթերի եւ ֆինանսական շուկաներում մենաշնորհային գործունեության եւ անբարեխիղճ մրցակցության հետ կապված իրավահարաբերությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ շուկաներում ձեւավորված իրավահարաբերություններն ազդեցություն են ունենում ապրանքային շուկաներում մրցակցության վրա, կարգավորվում են այլ իրավական ակտերով:

5. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ՀՈՂՎԱԾ 4. ՀՀ ՀԱԿԱՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՕՐԵՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետությունում հակամենաշնորհային օրենսդրությունը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վրա եւ կազմված է սույն օրենքից եւ այլ իրավական ակտերից, որոնք կարգավորում են սույն օրենքի 3 հոդվածով նախատեսված իրավահարաբերությունները:

2. Սույն օրենքի հիման վրա, ինչպես նաեւ վերջինիս կիրարկման նպատակով սույն օրենքով սահմանված դեպքերում ՀՀ կառավարությունն ու Հակամենաշնորհային կարգավորման մարմինն իրավասու են ընդունել որոշումներ եւ այլ նորմատիվային փաստաթղթեր, որոնք կանոնակարգելու են սույն օրենքից բխող իրավահարաբերություններն ու գործընթացները:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱԿԱՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՔՆԵՐԸ

Հակամենաշնորհային կարգավորման հիմնական սկզբունքներն են՝.

1) կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից՝ օրենսդրորեն լիազորված իրավասությունների շրջանակում,

2) որոշումների ընդունման կոլեգիալություն՝ քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմամբ,

3) կարգավորման թափանցիկության ապահովում քաղաքացիական հասարակության համար

4) սպառողների եւ կարգավորվող անձանց իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռումը,

5) խտրականությունների բացառումը,

6) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:

ՀՈՂՎԱԾ 6. ՀԱԿԱՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում պետական հակամենաշնորհային քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

- 1) մրցակցության կարեւոր նշանակությունը տնտեսական ենթակառուցվածքների եւ ապրանքային շուկաների արդյունավետ զարգացման համար
- 2) տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործընթացներում պետության միջամտության հնարավորությունների սահմանափակում
- 3) անբարեխիղճ մրցակցության կանխարգելում եւ համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառում
- 4) բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների կարգավորում
- 5) սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխավորում:

ԲԱԺԻՆ 2. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

ՀՈՂՎԱԾ 7. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Ապրանքային շուկաների ձեւավորման ու արդյունավետ գործունակության, բարեխիղճ մրցակցության խրախուսման ու զարգացման, ինչպես նաեւ սպառողների շահերի ու իրավունքների պաշտպանության, մենաշնորհային գործունեության ու անբարեխիղճ մրցակցության կանխարգելման, նախագուշացման ու սահմանափակման համար անհրաժեշտ պայմանների ապահովման, բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտներում բնակչությանը մատուցվող հիմնական ծառայությունների սակագների հաստատման, այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունների ֆինանսական վերահսկողության, ինչպես նաեւ հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման ապահովմանն ուղղված այլ միջոցառումների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված պետական քաղաքականության ու միջոցառումների իրականացման հիմնական գործառնություններն իրականացվում են Հակամենաշնորհային կարգավորման Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից: Խորհրդի իրավասությունները, գործառնությունները, պատասխանատվության շրջանակները, կառավարման մարմինները, հաշվետվողականությունն ու համապատասխան ֆինանսավորման մեխանիզմները կանոնակարգվում են օրենքով:

2. Խորհուրդը ստեղծվում է սույն օրենքով սահմանված կարգով, գործում է սույն օրենքի, այլ իրավական ակտերի, իր կանոնադրության եւ ներքին նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

3. Խորհուրդն ունի առանձնացված բյուջե, որը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից՝ Հակամենաշնորհային քաղաքականության եւ Հակամենաշնորհային կարգավորման մարմնի տարեկան աշխատանքային ծրագրի հետ՝ պետական բյուջեի հաստատման ընթացակարգերով սահմանված ժամկետներում:

4. Հակամենաշնորհային Խորհուրդը մշակում եւ իրականացնում է հակամենաշնորհային քաղաքականություն:

5. Հակամենաշնորհային քաղաքականությունը, տարեկան աշխատանքային ծրագիրը, ինչպես նաեւ գործունեության արդյունքների հաշվետվությունները մշակում եւ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի հաստատմանն է ներկայացնում սահմանված ժամկետներում, միաժամանակ տեղադրվում են Հակամենաշնորհային Խորհուրդի ինտերնետային կայքում եւ տպագրվում առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում:

6. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից Հակամենաշնորհային մարմնի տարեկան աշխատանքային ծրագրի եւ /կամ տարեկան հաշվետվության երկրորդ անգամ անընդմեջ չհաստատումը նշանակում է անվստահություն այդ մարմնի ղեկավարի նկատմամբ եւ ենթադրում է Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին Հակամենաշնորհային մարմնի ղեկավարի նոր թեկնածուի ներկայացում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Խորհուրդն իր առջեւ դրված խնդիրներն ու սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս անկախ է պետական այլ մարմիններից եւ ունի առանձնացված բյուջե:

ՀՈՂՎԱԾ 8. ՀԱՎԱՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1. Հակամենաշնորհային մարմինը կազմված է՝ գլխավոր մարմին հանդիսացող Հակամենաշնորհային կարգավորման Խորհրդից /Խորհուրդ/, ինչպես նաեւ Աշխատակազմից, որը ներառում է երեք հիմնական ուղղություններ համակարգող դեպարտամենտներ, հակամենաշնորհային քաղաքականության մշակման ու վերլուծությունների, հակամենաշնորհային կարգավորման եւ բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների կարգավորման եւ ֆինանսական վերահսկողություն:

2. Հակամենաշնորհային կարգավորման մարմնի Խորհուրդը մշտապես գործող եւ 13 անձանցից կազմված մարմին է, որի իրավասությունների ու լիազորությունների շրջանակները սահմանվում են սույն օրենքով եւ Հակամենաշնորհային Խորհրդի կանոնադրությամբ: Խորհուրդը կազմված է Նախագահից, երեք տեղակալներից եւ 9 անդամներից, որոնցից վեցը ընտրվում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Խորհրդի նշանակովի անդամները ընտրվում են 3-5 տարի ժամկետով: Խորհրդի անդամներից առնվազն 1-ը պետք է ունենա իրավաբանական եւ 1-ը տնտեսագիտական կրթություն:

3. Խորհրդի յոթ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ՝ տարեկան ռոտացիոն սկզբունքով /յուրաքանչյուր տարի Խորհրդի մեկ անդամի նշանակմամբ/ մինչեւ 5 տարի պաշտոնավարման ժամկետով: Խորհրդի մյուս անդամները ընտրվում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ օրենքով սահմանված բաց եւ թափանցիկ ընտրության մեխանիզմով:

4. Հայաստանի Հանրապետության նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ նշանակում է Խորհրդի նախագահ եւ երեք տեղակալներ, որոնք համապատասխանաբար պատասխանատու են հակամենաշնորհային քաղաքականության մշակման ու վերլուծությունների, հակամենաշնորհային կարգավորման եւ բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների կարգավորման եւ ֆինանսական վերահսկողության դեպարտամենտների աշխատանքների կազմակերպման համար: Ընդ որում, Խորհրդի նախագահի թեկնածուների առաջադրման առաջնահերթության իրավունքը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի ընդդիմադի խմբակցությանը (խմբակցություններին):

5. Խորհրդի անդամ կարող են նշանակվել եւ/կամ ընտրվել բարձրագույն կրթություն, կառավարման ոլորտում աշխատանքային փորձ ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված պարտականությունների կատարումը:

6. Հակամենաշնորհային մարմնի Խորհրդի անդամներն, ինչպես նաև աշխատակազմի անդամները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել ներկայացուցչական որեւէ մարմնի անդամ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեության:

7. Հակամենաշնորհային մարմնի Խորհրդում չեն կարող ընտրվել եւ կամ նշանակվել մարդիկ, ովքեր`

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն.
- 2) չունեն բարձրագույն կրթություն.
- 3) դատարանի` օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 4) դատարանի` օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարած հանցագործությունների համար,
- 5) հանդիսանում են Հակամենաշնորհային մարմնի խորհրդի անդամի հետ փոխկապակցված անձ.
- 6) օրենքով սահմանված կարգով գրկվել են որոշակի պաշտոններ վարելու իրավունքից:

8. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը եւ աշխատակիցների ծառայողական պարտականությունների շրջանակն ու ընտրության մեխանիզմները հաստատում է Խորհուրդը:

9. Խորհրդի աշխատակիցների թվաքանակը հաստատում է Խորհուրդը` համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:

ՀՈՂՎԱԾ 9. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

1. Խորհրդի Նախագահը`

- 1) համակարգում եւ ապահովում է Հակամենաշնորհային Խորհրդի ու նրա աշխատակազմի աշխատանքը,
- 2) հրավիրում եւ նախագահում է Խորհրդի նիստերը, ստորագրում է Խորհրդի որոշումներն ու նիստերի արձանագրությունները
- 3) խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին եւ քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել գրավոր կարծիք, որը ներառվում է նիստի արձանագրության մեջ
- 4) կազմակերպում է Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը
- 5) իր իրավասության շրջանակներում արձակում է հրամաններ

6) իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Խորհուրդը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում, միջազգային կազմակերպություններում եւ Խորհրդի անունից ստորագրում փաստաթղթեր:

2. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է Խորհրդի նախագահի Հակամենաշնորհային քաղաքականության եւ վերլուծությունների դեպարտամենտի համար պատասխանատու տեղակալը, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Խորհրդի նախագահի կամ խորհրդի որոշմամբ՝ մյուս տեղակալներից որեւէ մեկը, կամ Խորհրդի այլ անդամ:

ՀՈՂՎԱԾ 10. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ

1. Խորհրդի նիստում քննարկվող որեւէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն ունեցող Խորհրդի անդամը պարտավոր է քննարկումից առաջ տեղեկացնել մյուս անդամներին իր շահագրգռվածության փաստի եւ բնույթի մասին, ինչը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ: Այդ տեղեկացումից հետո նշված անդամը պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ նիստին մասնակցելուց եւ չպետք է հաշվառվի այդ նիստի իրավագործության ապահովման նպատակով:

2. Խորհրդի նիստում քննարկվող որեւէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն ունեցող Խորհրդի անդամի կողմից սահմանված կարգով քննարկումից առաջ Խորհրդի մյուս անդամներին իր շահագրգռվածության փաստի եւ բնույթի մասին տեղյակ չպահելը համարվում է կարգապահության խախտում եւ առաջացնում է պատասխանատվությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Անձը, որի հարցը քննվում է, կարող է բացարկ հայտնել Խորհրդի անդամին, եթե վերջինիս քննարկվող հարցի վերաբերյալ ունի անձնական շահագրգռվածություն:

ՀՈՂՎԱԾ 11. ՀԱՎԱՄԵՆԱՇՆՈՂՀԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հակամենաշնորհային մարմինը իրականացնում է

1) հակամենաշնորհային քաղաքականության մշակում եւ իրականացում,

2) բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն

3) հանրային ծառայությունների սակագների հաստատում

4) շահույթի սահմանային նորմաների հաստատում

5) հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման եւ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերի ընդունում

2. Հակամենաշնորհային մարմինն իրավունքն ունի.

1) Ներկայացնել եւ վերանայել հակամենաշնորհային քաղաքականության հիմնական գերակայություններն ու առաջնայությունները:

2) Քննարկումների եւ որոշումների ընդունման ժամանակ վճարովի հիմունքներով ներգրավել անկախ փորձագետներին:

3) Խորհուրդն ապահովում է իր եւ իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը գանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի եւ ժամանակակից այլ միջոցներով:

4) Ընդունել որոշումներ`

ա. սույն օրենքի խախտման փաստերի,

բ. ապրանքային շուկայի սահմանների, այդ շուկայում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի առկայության, ինչպես նաեւ դրանով պայմանավորված միջոցառումների իրականացման,

գ. տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատժամիջոցների կիրառելու

դ. սույն օրենքի դրույթների խախտման համար պատասխանատվություն սահմանելու

ե. բնական մենաշնորհների դեպքում սակագների վերին սահմանների եւ/կամ սահմանային շահութաբերության նորմի սահմանման մասին:

5) Տալ եզրակացություններ

ա. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերի` հակամենաշնորհային օրենսդրությանը հակասելու, դրանց վերացման, փոփոխման, ինչպես նաեւ խախտումների վերացման վերաբերյալ,

բ. կնքվող համաձայնությունները հակամրցակցային որակելու վերաբերյալ

6) Իրականացնել մոնիտորինգ եւ վերահսկողություն` տնտեսվարող սուբյեկտների կողմից համաձայնության պայմանների կատարման եւ/կամ պահպանման ուղղությամբ:

7) Դիմել դատական մարմիններ սույն օրենքի խախտումների վերաբերյալ, այդ թվում` օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաեւ դրանց փոփոխման կամ լուծման պահանջով:

8) Նշանակել տույժեր, տուգանքներ, ինչպես նաեւ օրենքով սահմանված այլ պատժամիջոցներ:

9) Տալ պարզաբանումներ եւ մեկնաբանություններ Հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման եւ օրենսդրության առանձին դրույթների մասին:

10) Ընդունել եւ հաստատել նորմատիվ իրավական ակտեր Հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման եւ անսահման խնդիրների կանոնակարգման նպատակով:

11) Հանդես գալ հակամենաշնորհային օրենսդրության կատարելագործման նախաձեռնությամբ ու առաջարկություններով:

ՀՈՂՎԱԾ 12. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Խորհրդի կանոնադրությունը սահմանում է Խորհրդի գործունեության կարգը, Խորհրդի կառուցվածքային ստորաբաժանումները եւ դրանց գործունեության կարգը, դրանց ղեկավարների եւ աշխատակիցների իրավասության շրջանակները, ինչպես նաեւ Խորհրդի ներքին կառավարմանը վերաբերող այլ հարցեր:

2. Խորհրդի կանոնադրությունը հաստատում է Խորհուրդը:

ՀՈՂՎԱԾ 13. ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

1. Խորհուրդն իր տարեկան ծախսերի նախահաշիվը /հայտը/ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն, որն այն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում առանձին տողով անփոփոխ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանը:

2. Խորհրդի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված խնդիրների եւ գործառնությունների պատշաճ իրականացման հնարավորությունը, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններում ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաեւ Խորհրդի անդամներին ու աշխատակազմին աշխատավարձերի վճարումը:

ՀՈՂՎԱԾ 14. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հակամենաշնորհային Խորհուրդը յուրաքանչյուր տարի, մինչեւ հոկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում ներկայացնում է հրապարակում է Հակամենաշնորհային քաղաքականությունը, հաջորդ տարվա աշխատանքային ծրագիրն, ինչպես նաեւ համապատասխան բյուջեն:

2. Տարեկան գործունեության արդյունքների ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի հաստատմանը տարվա արդյունքներով՝ հաջորդող 60-րդ օրը:

3. Հակամենաշնորհային քաղաքականությունը, աշխատանքային ծրագիրը եւ նախորդ տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունները տեղադրվում են ինտերնետային կայքում:

ՀՈՂՎԱԾ 15. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԸ

1. Հակամենաշնորհային Խորհուրդը յուրաքանչյուր տարի ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին, որն այդ հաշվետվության հավաստիության ճշտման նպատակով կարող է անցկացնել Խորհրդի ֆինանսական գործունեության աուդիտ: Խորհուրդը պարտավոր է չխոչընդոտել եւ աջակցել աուդիտի անցկացմանը:

ԲԱԺԻՆ 3. ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 16. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

1. Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող, եթե նա որպես մատակարար կամ սպառող չունի մրցակից կամ չի հանդիպում որեւէ էական մրցակցության, կամ իր իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը:

2. Տնտեսվարող սուբյեկտների կողմից էական մրցակցության չհանդիպելու չափորոշիչները, գերիշխող դիրքի եւ ապրանքային շուկաների սահմանների, ինչպես նաեւ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի /ռեեստրի/ վարման կարգը սահմանում եւ այն վարում է Խորհուրդը/:

3. Արգելվում եւ սահմանված կարգով անօրինական գործունեություն է համարվում տնտեսվարող սուբյեկտների կողմից, այդ թվում նաեւ այլ տնտեսվարող սուբյեկտի հետ համատեղ գերիշխող դիրքի չարաշահումը:

4. Գերիշխող դիրքի չարաշահումն արտահայտվում է.

ա. իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված գների, ՀՀ օրենսդրության կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասող առետրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրմամբ, որը հանգեցնում է մրցակցության սահմանափակմանը կամ իրականացվում է մրցակից չունեցող /էական մրցակցության չհանդիպող/ տնտեսվարող սուբյեկտների կողմից:

բ. Առետրի կամ արտադրության արդիականացման սահմանափակմամբ, արհեստական պակասորդի ստեղծմամբ՝ արտադրության չհիմնավորված կրճատման, ապրանքներին ի վնաս սպառողների շահերի պահելու, փչացնելու եւ/կամ ոչնչացնելու միջոցով:

գ. Առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների կիրառմամբ, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ:

դ. Պայմանագրի կողմին լրացուցիչ պարտավորությունների պարտադրմամբ, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկային:

ե. Տնտեսվարող սուբյեկտների վերակազմավորման կամ տնտեսական կապերի խզման պարտադրմամբ:

զ. Այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելով /սահմանափակելով/ կամ շուկայից նրան դուրս մղելով:

է. Համաձայնությունների կնքումը, որոնք սահմանափակում են այդ համաձայնագրի մասնակիցների ազատությունը երրորդ անձանց հետ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման պայմանագրի պայմանների որոշման ժամանակ /զին, քանակներ, ժամկետներ/:

ը. Այլ գործողություններ /անգործության/, որոնք հանգեցնում են վերոհիշյալ արդյունքներին:

ՀՈՂՎԱԾ 17. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՄԱՆԱՓՈՒԿՈՂ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն օրենքի իմաստով տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքվող այն պայմանագրերը կամ նրանց համաձայնեցված գործողությունները /այսուհետ՝ համաձայնություններ/, որոնք կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Իրանք են՝

1) խտրական գների սահմանումը

2) գնային համաձայնեցումները, ինչպես նաև ապրանքային շուկայում գների արհեստական բարձրացումները, իջեցումը կամ պահպանումը.

3) շուկայի բաժանումը տարածքային սկզբունքով, ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի, ապրանքի տեսականու, սպառողների կամ մատակարարների խմբերի եւ այլն.

4) այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտքի սահմանափակումը կամ խոչընդոտելը, կամ շուկայից վերջիններիս դուրս մղելը:

2. Արգելվում է օրենսդրությամբ սահմանված կարգով անօրինական գործունեություն են համարվում հակամրցակցային համաձայնությունները:

3. Հակամրցակցային չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղված են մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, եթե այդ համաձայնության մասնակիցների բաժինը տվյալ ապրանքային շուկայում չի գերազանցում քսան տոկոսը:

ԲԱԺԻՆ 4. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 18. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Նույն ապրանքային շուկայում համակենտրոնացում է համարվում

1) տնտեսվարող սուբյեկտների միացումը կամ միաձուլումը.

2) տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռքբերողին արդեն պատկանող ակտիվների կամ փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի 20 տոկոսը.

3) տնտեսվարող սուբյեկտների ցանկացած միավորում, որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա:

ՀՈՂՎԱԾ 19. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ

1. Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը կամ դրան մասնակցելը, ենթակա է հայտարարագրման, եթե`

1) մասնակիցների ակտիվների համատեղ արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երեք միլիարդ դրամ.

2) մասնակիցները գործում են միեւնույն ապրանքային շուկայում եւ նրանց ակտիվների համատեղ արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն մեկ միլիարդ դրամ.

3) մասնակիցներից մեկի ակտիվների արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երեք միլիարդ դրամ.

4) մասնակիցները գործում են միեւնույն ապրանքային շուկայում եւ նրանցից մեկի ակտիվների արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն մեկ միլիարդ դրամ:

2. Համակենտրոնացման հայտարարագրում նշվում է համակենտրոնացման ձեւը եւ մասնակիցներից յուրաքանչյուրի մասին հետեւյալ տեղեկատվությունը`

1) անունը (անվանումը), բնակվելու (գտնվելու) եւ գործունեության վայրը.

2) գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունները` հայտարարագրման նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ եւ դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Եթե համակենտրոնացման մասնակիցներից որեւէ մեկը գործունեությունը սկսել է տվյալ տարում, ապա նրա ֆինանսական հաշվետվությունները եւ դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը ներկայացվում են հայտարարագրման նախորդ ամսվա վերջի դրությամբ.

3) նախորդ տարվա ընթացքում իրացրած ապրանքների ծավալներն ըստ տեսականու, ինչպես նաեւ արտադրական կարողությունների նկարագիրը.

4) հայտարարագրողի ցանկությամբ` նաեւ ապրանքային շուկային եւ շուկայի մասնակիցների գործունեությանը վերաբերող այլ տեղեկություններ:

3. 3. Համակենտրոնացման հայտարարագրման կարգը եւ հայտարարագրի ձեւը սահմանում է Խորհուրդը:

ՀՈՂՎԱԾ 20. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումն արգելվում է, բացառությամբ այն դեպքի, երբ այն նպաստում է սպառողների շահերին եւ (կամ) տվյալ ապրանքային շուկայի մրցակցային միջավայրի զարգացմանը:

2. Հայտարարագրման ենթակա կամ գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումը թույլատրվում է Հակամենաշնորհային Խորհրդի որոշման հիման վրա:

3. Արգելվում է հայտարարագրման ենթակա կամ գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումը գործողության մեջ դնելը կամ համակենտրոնացմանը մասնակցելը` մինչեւ Հակամենաշնորհային Խորհրդի կողմից որոշում կայացնելը:

4. Գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումը ենթակա է լուծարման (լուծման, դադարեցման)` Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 5. ԱՆԲԱՐԵՆԻՂՔ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾ 21. ԱՆԲԱՐԵՆԻՂՔ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Ցանկացած գործողություններ կամ վարքագիծ ուղղված մրցակցության սահմանափակմանը կամ վերացմանը այլ տնտեսվարող սուբյեկտների ազատ մրցակցության իրավունքների,

ինչպես նաև սպառողների իրավունքների ու օրինական շահերի խախտման ճանապարհով արգելվում է:

2. Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության` ազնվության արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները:

3. Անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է եւ սահմանված կարգով համարվում է անօրինական գործունեություն:

4. Արգելվում է եւ սահմանված կարգով համարվում է անօրինական գործունեություն ձեռնարկատիրական գործունեության իրականացման ժամանակ սույն օրենքի եւ մրցակցությունը խրախուսող այլ օրենսդրական ակտերի պահանջներին հակասող գործողությունները, այդ թվում.

1) տնտեսվարող սուբյեկտների կողմից անմիջականորեն կամ այլ անձանց միջոցով մրցակիցների համար գործարար կապերի ստեղծմանը խոչընդոտող գործողությունները, կամ այդ գործարար կապերի կազմալուծմանն ուղղված գործողությունները` այդ թվում վերջինիս գործընկերների հետ գործարար կապեր ստեղծելու նպատակով,

2) տնտեսվարող սուբյեկտների կողմից անմիջականորեն կամ այլ անձանց միջոցով մրցակիցների, ինչպես նաև նրա գործընկերների ձեռնարկատիրական գործունեության ներքին ապակազմակերպումը, այդ թվում առեւտրային եւ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ստացումը, օգտագործումը, տարածումը

5. Յուրաքանչյուր շահագրգիռ անձ, այդ թվում` սպառողը, որն անբարեխիղճ մրցակցության հետեւանքով վնաս է կրել, իրավունք ունի դատական կարգով պահանջել խախտված իրավունքի վերականգնում: Սույն իրավունքը վերապահվում է նաև շահագրգիռ անձերի տնտեսական շահերը պաշտպանելու իրավասություն ունեցող կազմակերպություններին:

ՀՈՂՎԱԾ 22. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏԻ ԿԱՍ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՅՆԵԼԸ

1. Ցանկացած գործողություններ կամ վարքագիծ ուղղված մրցակցության սահմանափակմանը կամ վերացմանը այլ տնտեսվարող սուբյեկտների ազատ մրցակցության իրավունքների, ինչպես նաև սպառողների իրավունքների ու օրինական շահերի խախտման ճանապարհով արգելվում է:

2. Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության` ազնվության արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները:

ՀՈՂՎԱԾ 23. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏԻ ԿԱՍ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԲԵՐԿՈՒՄԸ

1. Ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ ցանկացած կեղծ կամ անհիմն հայտարարություն, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել տնտեսվարող սուբյեկտին, նրա գործունեությունը կամ առաջարկած ապրանքները, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն եւ արգելվում է:

2. Սույն հոդվածի իմաստով վարկաբեկումը կարող է ծագել ապրանքների գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների իրականացման ընթացքում եւ, մասնավորապէս, տեղի ունենալ ապրանքների՝

- 1) արտադրության գործընթացի /տեղ, բնույթ, միջոց եւ պայմաններ/
- 2) որոշակի նպատակի համար դրանց պիտանիության,
- 3) որակի, քանակի կամ այլ բնութագրերի,
- 4) առաջարկման կամ մատուցման պայմանների
- 5) գնի կամ դրա հաշվարկման եղանակի նկատմամբ:

ԲԱԺԻՆ 6. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾ 24. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Սպառողների շահերի պաշտպանության, ինչպէս նաեւ ոլորտային հասարակական կազմակերպություններն ու միավորումները, որոնք իրենց կանոնադրական նպատակն են համարում սպառողների շահերի պաշտպանությունը տնտեսվարող սուբյեկտների չարաշահումներից, կարող են իրականացնել հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման նկատմամբ հասարակական վերահսկողություն:

2. Հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական կազմակերպություններն ու միավորումները իրավունք ունեն.

1) հակամենաշնորհային օրենսդրության խախտումների մասին դիմում ներկայացնել Հակամենաշնորհային մարմնին եւ ներկայացնել առաջարկություններ այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

2) դատարան հայց ներկայացնել սպառողների իրավունքների, ազատության եւ օրինական շահերի պաշտպանության պահանջով հակամենաշնորհային օրենսդրության խախտումներ թույլ տված անձանցից:

3) իրականացնել ինքնուրույն փորձագիտական էքսպերտիզա /վերահսկողություն/՝ հակամենաշնորհային օրենսդրությամբ սահմանված դեպքերում կազմակերպությունների նկատմամբ կիրառված պատժամիջոցների կիրարկման նկատմամբ եւ իրազեկել հանրությանը:

4) օրենսդրությանը չհակասող այլ գործողությունների իրականացում:

ԲԱԺԻՆ 7. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**ՀՈՂՎԱԾ 25. ՀԱԿԱՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ԻՐԱՎԱԽԱՍԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

1. Սույն օրենքի պահանջները խախտելու համար տնտեսվարող սուբյեկտները, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները եւ նրանց պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն` սույն օրենքով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հակամենաշնորհային կարգավորման մարմնի պաշտոնատար անձը սույն օրենքի դրույթների խախտման համար կրում է պատասխանատվություն` օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն օրենքի պահանջների խախտման համար ?ֆիզիկական կամ պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն` Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը, այդ համաձայնությանը մասնակցելն) առաջացնում է տուգանքի նշանակում` հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի` այդ համաձայնությունը կնքելու (կայացնելու, դրան մասնակցելու) նախորդ տարվա հասույթի հինգ տոկոսի չափով: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն մասով նախատեսված իրավախախտումն առաջացնում է տուգանքի նշանակում` հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի` այդ համաձայնությունը կնքելուն կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի հինգ տոկոսի չափով:
5. Գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում` տնտեսվարող սուբյեկտի` իրավախախտման նախորդ տարվա հասույթի հինգ տոկոսի չափով: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն մասով նախատեսված իրավախախտումն առաջացնում է տուգանքի նշանակում` տնտեսվարող սուբյեկտի` իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի հինգ տոկոսի չափով:
6. Սույն օրենքով նախատեսված դեպքում համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը (այդ համակենտրոնացմանը մասնակցելը) առաջացնում է տուգանքի նշանակում` համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի` համակենտրոնացմանը մասնակցելու նախորդ տարվա հասույթի տաս տոկոսի չափով: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտումն առաջացնում է տուգանքի նշանակում` համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի` համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի տաս տոկոսի չափով:
7. Անբարեխիղճ մրցակցության գործողությունն առաջացնում է տուգանքի նշանակում` հինգ հարյուր հազար դրամի չափով: Մեկ տարվա ընթացքում այդ իրավախախտման կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում` մեկ միլիոն դրամի չափով:
8. Արգելված պետական օժանդակություն ստանալն առաջացնում է տուգանքի նշանակում` տնտեսվարող սուբյեկտի` իրավախախտման նախորդ տարվա հասույթի հինգ տոկոսի չափով: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտումն առաջացնում է տուգանքի նշանակում`

տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի հինգ տոկոսի չափով:

9. Խորհրդի որոշմամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ հինգ հարյուր հազար դրամի չափով: Այդ իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ երկու միլիոն դրամի չափով:

10. Խորհրդի անդամներին կամ աշխատակիցներին սույն օրենքով, Խորհրդի կանոնադրությամբ կամ այլ իրավական ակտերով վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

ՀՈՂՎԱԾ 26. ՀԱԿԱՍԵՆԱՇՆՈՂՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԶԿԱՏԱՐԵԼԸ

1. Տնտեսվարող սուբյեկտների կողմից Հակամենաշնորհային կարգավորման մարմնի որոշումները համապատասխան ժամկետներում չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ բազային տուրքի հազարապատիկի չափով:

2. Տնտեսվարող սուբյեկտների կողմից Հակամենաշնորհային կարգավորման մարմնի որոշումները փաստաթղթեր եւ այլ տեղեկություններ ներկայացնելու մասին համապատասխան ժամկետներում չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ բազային տուրքի հարյուրապատիկի չափով:

ՀՈՂՎԱԾ 27. ՎՆԱՄՆԵՐԻ ՓՈՒՆՉԱՏՈՒՅՈՒՄԸ

1. Եթե սույն օրենքի դրույթների խախտմամբ տնտեսվարող սուբյեկտների գործողությունների կամ անգործության արդյունքում վնաս է հասցվել այլ տնտեսվարող սուբյեկտների կամ ֆիզիկական անձանց, ապա այդ վնասը ենթակա է փոխհատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Հակամենաշնորհային կարգավորման մարմնի պատասխանատու աշխատակիցների գործողությունների /անգործության/ հետեւանքով սույն օրենքի դրույթների խախտման պատճառով տնտեսվարող սուբյեկտներին եւ/կամ ֆիզիկական անձանց հասցված վնասը ենթակա է փոխհատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 28. ՀԱԿԱՍԵՆԱՇՆՈՂՀԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՓՈՒՄԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Տնտեսվարող սուբյեկտները, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, նրանց պաշտոնատար անձինք Խորհրդի պահանջի դեպքում սահմանված ժամկետներում տեղեկատվության /փաստաթղթեր, գրավոր կամ բանավոր բացատրություններ եւ այլն/ չտրամադրելու, ինչպես նաեւ Խորհրդի օրինական գործողությունները խոչընդոտելու համար կրում են պատասխանատվություն սույն օրենքով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Հակամենաշնորհային կարգավորման մարմնի պաշտոնատար անձինք իրենց պաշտոնական պարտականությունների կատարման շրջանակներում օրենսդրորեն սահմանված կարգով

իրավունք ունեն պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ տնտեսվարող սուբյեկտների մոտ ծանոթանալու, ինչպես նաեւ վերցնելու իրենց անհրաժեշտ տեղեկատվության կրկնօրինակները՝ իրենց պաշտոնական պարտականությունների կատարման իրավասության շրջանանկներում:

3. Խորհուրդը պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գաղտնիությունն իր աշխատանքների ընթացքում հայտնի դարձած պետական եւ կամ այլ գաղտնիք հանդիսացող, ինչպես նաեւ կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի գործունեությանն ու առեւտրային շահերին առնչվող այլ տեղեկություններ ու տվյալներ:

ՀՈՂՎԱԾ 29. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՂՀԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

1. Հակամենաշնորհային մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է դատական կարգով եւ/ կամ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով:

2. Տնտեսվարող սուբյեկտների հայցով Խորհրդի կամ վարչական պատժամիջոցներ սահմանելու մասին դատարանի վճռի մասնակի կամ ամբողջական բողոքարկման ժամանակ ժամանակավորապես կասեցվում է որոշման կատարումը՝ մինչեւ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկման հայցի վերաբերյալ դատարանի վճռի օրինական ուժ ստանալը:

ՀՈՂՎԱԾ 30. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՂՀԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՍՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՓՈՒԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Տնտեսվարող սուբյեկտները, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, նրանց պաշտոնատար անձինք Հակամենաշնորհային մարմնի պահանջի դեպքում սահմանված ժամկետներում տեղեկատվության /փաստաթղթեր, գրավոր կամ բանավոր բացատրություններ եւ այլն/ չտրամադրելու, ինչպես նաեւ Հակամենաշնորհային մարմնի օրինական գործողությունները խոչընդոտելու համար կրում են պատասխանատվություն սույն օրենքով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 31. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հակամենաշնորհային մարմինը ստեղծվում է նախագահի հրամանագրի հիման վրա՝ սույն օրենքի ընդունից հետո մեկամսյա ժամկետում՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի եւ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործառնության եւ նյութատեխնիկական բազաների հիման վրա:

2. Մինչեւ սույն օրենքով սահմանված հակամենաշնորհային մարմնի ձեւավորումը, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը եւ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը իրականացնում են իրենց իրավասություններն ու լիազորությունները:

3. Հասարակական վերահսկողություն իրականացնելու համար համապատասխան հասարակական կազմակերպությունները պետք է համապատասխան հայտարարություն

ներկայացնեն Խորհրդի՝ հասարակական մոնիտորինգի եւ վերահսկողության իրենց գործունեությունը սկսելուց առնվազն 7 օր առաջ:

4. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ նախագահը նշանակում է Հակամենաշնորհային մարմնի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ:

5. Հակամենաշնորհային մարմինը գործում է 2012թ. հունվարի 1-ից:

ՀՈՂՎԱԾ 32. ԵԶՐԱՓՍԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասնհինգերորդ օրը:

2. 2012 թվականի հունվարի 1-ից տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի եւ Հանրային ծառայությունները կարագավորող հանձնաժողովի իրավասության ներքո գտնվող գործառույթների մասով արդեն իսկ վարույթում գտնվող գործերն իրավահաջորդության սկզբունքով փոխանցվում են հակամենաշնորհային մարմնին:

3. 2012 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմին մասին» 2003 թվականի դեկտեմբերի 25-ի, թիվ ՀՕ-18-Ն եւ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի, թիվ ՀՕ-112 Հայաստանի Հանրապետության օրենքները:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ Է ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հայաստանի Հանրապետությունը դեռեւս 1993 թվականից ստանձնել է համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականություն վարելու մասին միջպետական պարտավորություն¹, որն այդ դաշտում համագործակցությանը զուգահեռ ենթադրում է նաեւ հակամենաշնորհային օրենսդրությունների մերձեցում՝ համաձայնեցված գործունեության իրականացման մասով: Միաժամանակ, համաձայն ՀՀ սահմանադրության՝

□ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

□ Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը եւ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

□ Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները եւ դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

Պետական քաղաքականության իրականացման նպատակով ստեղծվել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմին՝ Հանձնաժողով: Սակայն մինչ օրս մենք չունենք հաստատված տնտեսական մրցակցության պաշտպանության պետական

ռազմավարություն կամ ծրագիր: Իսկ 2004թ. փետրվարից Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

Ընդ որում, թեպետ հակամենաշնորհային կարգավորման դաշտին առնչվող հիմնական խնդիրների կանոնակարգման նպատակով երկրում ստեղծվել են երկու անկախ հանձնաժողովներ՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ 5 անդամ եւ տնտեսական մրցակցության հանձնաժողովը՝ 7 անդամ, որոնք նույնական են նաեւ իրենց թերություններով ու սահմանափակումներով.

□ քաղաքականության մշակման եւ իրականացման գործառույթ չկա

□ քաղաքականություն որպես այդպիսին չկա

□ հանրության առջեւ հաշվետվություն չկա

□ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության շահերի ներկայացուցիչներ չկան

□ ի սկզբանե չկան հնարավոր չարաշահումները կանխարգելող օրենսդրական նորմեր

□ չկան մոնաշնորհային դիրքեր ունեցող կազմակերպությունների նկատմամբ որակի վերահսկողության նորմեր

□ կանոնակարգման մեխանիզմները չեն նպաստում մրցակցային շուկայի զարգացմանը, իսկ բնական մենաշնորհների մասով՝ որակյալ ծառայությունների մատուցումը երաշխավորելուն:

Ներկայացվող նախագծով փորձ է արվում նոր որակի կարգավորման դաշտ տեղափոխել շուկայական տնտեսության կարելուրագույն նախապայմաններից մեկի՝ մրցակցության խրախուսման ու պաշտպանության հիմնախնդիրները: Այս նախագիծը՝

1. հիմնականում ավելի ուժեղ ու դինամիկ կառույց է դիտում կարգավորող մարմնին

2. այն ենթադրում է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածություն եւ որոշումների կայացման մասնակցայնության ու թափանցիկության ապահովում

3. հանրության առջեւ կարգավորող մարմնի հաշվետվողականության բարձրացում

4. Մենաշնորհային գործունեության արդյունավետ կանոնակարգման ու կարգավորման միասնական մոտեցման ապահովում

5. Հակամենաշնորհային /տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության կամ ռազմավարության որդեգրման անհրաժեշտություն, որը նաեւ ենթադրում է իրականացված քաղաքականության արդյունավետության գնահատում, հաշվետվությունների որոշակի համակարգի ներդրում

6. կրկնվող գործառույթների եւ ավելորդ վարչական ծախսերի կրճատում

7. հանձնաժողովին արդյունավետ վերահսկողական գործառույթների ամրագրում

8. մրցակցային միջավայրի ու իրավիճակի համար որոշակի պատասխանատվության սահմանում հանձնաժողովի նկատմամբ

9. սպառողների շահերի արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ներդրման ու կիրարկման հնարավորություն:

10. սահմանում է հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման նկատմամբ հասարական վերահսկողության ինստիտուտ

Միաժամանակ սույն նախագիծը ենթադրում է գործող օրենսդրության ու կարգավորման մեխանիզմներում արդյունավետ գործող տարրերի պահպանում, կարգավորող մարմնի իրավասությունների ընդլայնում, ինչպես նաև երկրում մրցակցային միջավայրի ապահովման, համապատասխան հակամենաշնորհային քաղաքականության ամրագրման ու իրականացման, ինչպես նաև ստեղծված մրցակցային միջավայրի համար պատասխանատվության կիսում նաև կարգավորող մարմնի հետ:

Նախագիծը սահմանում է մենաշնորհային գործունեության եւ ոչ բարեխիղճ մրցակցության կանխարգելման, նախագգուշացման ու սահմանափակման, ինչպես նաև բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների քննարկման, հաստատման եւ այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունների ֆինանսական վերահսկողության իրականացման իրավական եւ կազմակերպչական հիմքերը` նպատակ ունենալով ապահովել ապրանքային շուկաների արդյունավետ գործունակության, բարեխիղճ մրցակցության աջակցության ու զարգացման, ինչպես նաև սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջավայր ու պայմաններ:

Ներկայացվող օրենքի նախագծով կանոնակարգվում է բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպությունների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների սակագների սահմանումը եւ այդ կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը: Մասնավորապես, այդ ոլորտներին են դասվում.

էներգետիկական համակարգը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,

ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը եւ կեղտաջրերի մաքրումը,

հեռահաղորդակցության/էլեկտրոնային հաղորդակցության/բնագավառը,

փոստային կապի բնագավառը

երկաթուղային տրանսպորտի բնագավառը` ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման եւ օգտագործման վճարի հաստատման մասով:

տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ,

□ հանրային տրանսպորտ /այդ թվում՝ ստորգետնյա էլեկտրատրանսպորտ՝ մետրո/

Ըստ նախագծի հակամենաշնորհային կարգավորման հիմնական սկզբունքներ են ամրագրվում.

1. կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից՝ օրենսդրորեն լիազորված իրավասությունների շրջանակում,
2. որոշումների ընդունման կոլեգիալություն՝ քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմամբ,
3. կարգավորման թափանցիկության ապահովում քաղաքացիական հասարակության համար
4. սպառողների եւ կարգավորվող անձանց իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռումը,
5. խտրականությունների բացառումը,
6. մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:

Որպես Հայաստանի Հանրապետությունում պետական հակամենաշնորհային քաղաքականության հիմնական խնդիրներն են առանձնացվել՝

1. մրցակցության կարելոր նշանակությունը տնտեսական ենթակառուցվածքների եւ ապրանքային շուկաների արդյունավետ զարգացման համար
2. տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործընթացներում պետության միջամտության հնարավորությունների սահմանափակում
3. անբարեխիղճ մրցակցության կանխարգելում եւ համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառում
4. բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների կարգավորում
5. սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխավորում:

Առաջարկվող Հակամենաշնորհային մարմինը, հակամենաշնորհային մարմինը կազմված է՝ գլխավոր մարմին հանդիսացող Հակամենաշնորհային կարգավորման Խորհրդից /Խորհուրդ/, ինչպես նաեւ Աշխատակազմից, որը ներառում է երեք հիմնական ուղղություններ համակարգող դեպարտամենտներ. 1. հակամենաշնորհային քաղաքականության մշակման ու վերլուծությունների, 2. Հակամենաշնորհային կարգավորման եւ 3. բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների կարգավորման եւ ֆինանսական վերահսկողություն:

Նախատեսված է, որ Հակամենաշնորհային մարմինը իրականացնում է.

□ հակամենաշնորհային քաղաքականության մշակում եւ իրականացում

□ բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն

□ հանրային ծառայությունների սակագների հաստատում

□ շահույթի սահմանային նորմաների հաստատում

□ հակամենաշնորհային օրենսդրության կիրարկման եւ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերի ընդունում եւ գործադրում:

¹ 1993 թվականի դեկտեմբերի 23-ի «Համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականություն վարելու մասին եւ միջպետական պայմանագիր

